

Սյուզան Փոլ Փաթին Լոնդոնի համալսարանական քոլեջի (UCL) պատվավոր ավագ գիտաշխատող է և Լոնդոնի Հայկական ինստիտուտի նախկին տնօրենը: Վերջին տարիներին եղել է Ամերիկայի հայկական թանգարանի տնօրենը և Վաշինգտոնում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի հիշատակի միջոցառումների ծրագրի ղեկավարը: Նա մարդաբանության դոկտորի աստիճան ունի Միչիգանի համալսարանից և հեղինակել է «Հավատամք պատմությանը. համայնք վերականգնող հայերը» ազգագրությունը (1997):

«Հայ լեգեոնականները» անգլախոս ընթերցողներին ներկայացնում է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում Միջին Արևելքի պատմության կարևոր, սակայն քիչ հայտնի կողմը: Հայկական լեգեոնը ձևավորվեց այն ժամանակ, երբ դեռ չարունակվում էր Օսմանյան կայսրության կողմից հայ բնակչության ցեղասպանությունը, և լեգեոնի տեղակայման, գործողությունների ու կազմալուծման այս պատմությունը ի մի է բերում Միջին Արևելքում Մեծ պատերազմի հետագա ընթացքը, ցեղասպանության հետևանքները, հետպատերազմյան անպազայի հետ կապված հայերի հույսերը, թուրք ազգայնականության վերածնունդը և մեծ տերությունների ցինիկ քաղաքականությունը»:

Դոնալդ Բլոքսեմ՝ Ռիչարդ Փարեսի անվան եվրոպական պատմության պրոֆեսոր, Էդինբուրգի համալսարան

«Այս գիրքը, որը գրված է մատչելի լեզվով և ուղղված է թե՛ լայն հանրությանը, թե՛ գիտնականներին, մեծ մասամբ հիմնված է մի քանի առանցքային կամավորի հրատարակված և անտիպ հուշերի վրա: Այս ուսումնասիրությունն արժեքավոր ծառայություն է մատուցում նաև ոչ հայ ընթերցողին, քանի որ ականատեսների այդ հուշերից էական հատվածներ ներկայացված են հայերենից անգլերեն թարգմանությամբ: Բազմաթիվ լուսանկարներն ու քարտեզները, անշուշտ, լրացուցիչ կյանք են հաղորդում դեմքերին, իրավիճակներին ու վայրերին: Այս գիրքը շատ

տեղին հիշեցնում է Լևանտում Առաջին աշխարհամարտի ժամանակ դաշնակիցների հաղթանակում հայերի հաճախ մոռացված ներդրման մասին: Այն նաև հարգանքի տուրք է երիտասարդ տղամարդկանց ու կանանց, ովքեր իրենց կյանքը վտանգեցին վեհ նպատակի համար»:

*Վահրամ Լ. Շենասյան՝ պրոֆեսոր, Նորթրիջում
Կալիֆոռնիայի պետական համալսարանի
Հայագիտության ծրագրի տնօրեն*

«Հայկական լեգեոնի մասին երկար սպասված գիրք: Հեղինակը հրաշալի աշխատանք է կատարել՝ խոսքը տրամադրելով այս պատմության գլխավոր դերակատարներին՝ լեգեոնականներին, որոնք իրենց հուշագրերից մեջբերումներով գիրքը դարձնում են ավելի վառ, կոնկրետ ու հասկանալի: Գրքում զետեղված լեգեոնականների բազում լուսանկարները նույնպես շատ կարևոր են հայ պատմության մեջ այս վճռական ժամանակաշրջանը հաջողությամբ վերականգնելու համար»:

*Վահե Թաջջյան՝ «Հուշամատյան» ծրագրի
ղեկավար և գլխավոր խմբագիր, Բուդապեշտի
«Péter Pázmány» կաթոլիկ համալսարանի դասախոս*

ՀԱՅ ԼԵԳԵՈՆԱԿԱՆՆԵՐԸ

Զոհաբերություն և դավաճանություն
Առաջին համաշխարհային
պատերազմում

ՍՅՈՒԶԱՆ ՓՈԼ ՓԱԹԻ

Մեկ գլուխը՝ ԿԱՐԱԿ ՔԵԹՍԵՄԱՆՅԱՆԻ



Երևան
Մեդիամաքս
2020

ՀԱՅ ԼԵԳԻՈՆԱՐԱՆՆԵՐԸ

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

Փ 126

This translation is published by arrangement with Bloomsbury Publishing Plc.

The Armenian Legionnaires: Sacrifice and Betrayal in World War I

Գրքի հայերեն թարգմանությունն ու հրատարակությունն իրականացվել է «Մեդիամաքս» մեդիաընկերության կողմից Bloomsbury Publishing Plc-ի համաձայնությամբ:

Թարգմանիչ՝ Ասրիա Սադոյան

ՓԱԹԻ ՍՅՈՒԶԱՆ ՓՈԼ

Փ 126 ՀԱՅ ԼԵԳԻՈՆԱՐԱՆՆԵՐԸ: Զոհաբերություն և դավաճանություն Առաջին համաշխարհային պատերազմում / ՍՅՈՒԶԱՆ ՓՈԼ ՓԱԹԻ: Մեկ գլուխը՝ ՎԱՐԱԿ ՔԵՏԵՄԱՆՅԱՆԻ.- Եր.: Մեդիամաքս, 2020.- 288 էջ:

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

Գրքի հայերեն թարգմանությունն ու հրատարակությունն իրականացվել է «Գալուստ Կիլպենկեան» Հիմնարկության աջակցությամբ:



Գրքում արտահայտված մտքերը պարտադիր չէ, որ արտացոլեն «Գալուստ Կիլպենկեան» Հիմնարկության տեսակետները: Հիմնարկության աջակցությունը չի հանդիսանում է որևէ կարծիքի հաստատում:

ISBN 978-9939-1-1061-5

Copyright © 2020 Մեդիամաքս
Copyright © 2018 Susan Paul Pattie
Copyright © 2018 Varak Ketsemanian, Chapter 2.

Նախաբան

Ինչքան ինձ հիշում եմ, երբ մեծանում էի մասաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաքում, հայ լեգեոնականներն իմ կյանքի մի մասն էին: Հյուսենիկում՝ Օսմանյան Թուրքիայի հայկական գյուղում ծնված իմ հայրը՝ Նշան Նաջարյանը, ԱՄՆ էր արտագաղթել, նախքան 1915 թ. Հայոց ցեղասպանությունը ու հիմնավորվել Քեմբրիջում: Չնայած Միացյալ Նահանգներում իր հարմարավետ ու անվտանգ կյանքի, նա հարյուրավոր այլ երիտասարդ հայերի պես արձագանքեց հայ լեգեոնականներին միանալու կոչին: Տասնինը տարեկան էր: Պատերազմի վերջում վերադարձավ տուն ու բերեց Ցեղասպանությունը վերապրած մի կնոջ դստեր հետ: Մենք չգիտենք, թե որտեղ և ինչպես էին ծանոթացել: Բայց գիտենք, որ երբ նրան զորացրեցին լեգեոնից, ասացին, որ կարող է մնալ տարածաշրջանում կամ նավով մեկնել Միացյալ Նահանգներ ու մի հոգի վերցնել հետը: Հայրս ասաց, որ ուզում է վերադառնալ, բայց պնդեց, որ կվերցնի մորն ու աղջկան, առանց երկուսի չի հեռանա: Նա ձեռք բերեց անհրաժեշտ թույլտվությունը, բերեց նրանց Միացյալ Նահանգներ և ի վերջո ամուսնացավ դստեր՝ Արշալույսի՝ մորս հետ:

Վերադարձած լեգեոնականները դարձան մտերիմ, ցմահ ընկերներ, որոնց պարբերաբար տեսնում էինք: Հիշում եմ՝ ինչպես էինք գնում մասաչուսեթսի Ֆրենքլին քաղաքում կազմակերպվող «Հայաստան ճամբար»՝ լեգեոնականների զբոսախնջույքներին, որտեղ նրանք հավաքվում էին ընտանիքներով, և տղամարդիկ պատմություններ էին պատմում: Տարին մի քանի անգամ լեգեոնականները հավաքվում էին, կարտ խաղում ու վայելում միմյանց ընկերակցությունը: Նմանատիպ ոչ պաշտոնական խմբերով հավաքվում էին տարբեր քաղաքներում՝ Փրովիդենս, Ռոդ Այլենդ, Նյու Բրիթըն, Քոնեկտիկուտ, Թրոյ, Նյու Յորք, Վորչեսթեր, Բոստոն, Քեմբրիջ, Սփրինգֆիլդ, Լորենս, մասաչուսեթս:

Այդ երիտասարդ մարտիկների մասին ոչ հայերի հետ խոսելիս օգտագործում էինք լեգեոնականներ բառը, բայց հայերի մեջ ընդհանուր խոսակցության ժամանակ նրանք հայտնի էին որպես կամավորներ: Այս մարդիկ հիացնում ու ոգեշնչում էին ինձ. երիտասարդ տղաներ, որոնք կամավոր վտանգեցին իրենց կյանքը, վերադարձան հայրենիք ու կռվեցին, որոնք նվիրված էին Հայաստանն ազատագրելու ու կարիքավորներին փրկելու գործին:

Այս գիրքը նվիրված է կամավորներին՝ հայ լեգեոնականներին, այն մարդկանց, որոնց վճռականությունը բոցավառվեց իրենց իդեալիզմից ու քաջությունից, որի վառ օրինակն իմ հայրն էր՝ Նշան Նաջարյանը:

4. Ջորջ Նաջարյան



Լեգեոնից զորացրվելուց հետո Նշան Նաջարյանը (աջից) վերադարձավ Մասաչուսեթս՝ հետը բերելով Ցեղասպանությունից փրկված մի մայր և դուստր: Հետագայում նա ամուսնացավ Արշալույսի հետ (կենտրոնում), և նրանք միասին չորս զավակներ մեծացրեցին:

Երախտագիտության խոսքեր

Հեղինակն ու հովանավորները շատերին են պարտավոր շնորհակալություն հայտնել այս գրքում իրենց ներդրումների համար: Մենք հատկապես երախտապարտ ենք «Baikar Press»-ին, Գևորգ Մարաշյանին և Արամ Արքունուն Տիգրան Բոյաջանի «Հայկական լեգեոնը» գրքից հատվածներ թարգմանելու և օգտագործելու թույլտվության համար: Բոյաջանի այս վառ գրքում զետեղված են տարբեր լեգեոնականների բազում տեսակետներ, և իր բազմաթիվ զինակիցների կողմից գրված խոսքերը Բոյաջանը համատեղում է սեփական հուշերի ու հետազոտությունների հետ: Բոյաջանի գիրքն այս աշխատության հիմքն է: Դոկտոր Գագիկ Ստեփան-Սարգսյանն մանրակրկիտ թարգմանել է այս և մնացած այլ հատվածները սույն գրքի համար: Անչափ շնորհակալ ենք թարգմանության, ինչպես նաև մշտապես պահանջված իմաստուն խորհուրդների համար:

Հայ լեգեոնականների մասին գիրք հրատարակելու երազանքը սկսվեց ավագ Մայքլ Նաջարյանից, ով 1980-ականների կեսերին սկսեց հավաքել հոր՝ Նշանի ընկեր-լեգեոնականների նամակները, հուշերն ու լուսանկարները: Նրա եղբայր Զորջը կիսում էր այդ տարվածությունը: Զորջի և նրա կնոջ՝ Քերոլանի ֆինանսական աջակցությամբ «Զորյան ինստիտուտ»-ը ձայնագրեց հարցազրույցներ լեգեոնականների հետ, իսկ տարիներ անց օգնեց ֆինանսավորել Հայկական գրադարանում և Ամերիկայի թանգարանում լեգեոնականների մասին մեծ ցուցահանդեսը, զուգահեռ՝ շրջիկ ցուցահանդեսը: Եվ վերջապես, այս ջանքերից ոգեշնչված, իրականություն դարձավ նաև սույն գիրքը:


Երկար ժամեր ենք անցկացրել Ամերիկայի հայկական թանգարանի (նախկինում՝ Հայկական գրադարան և Ամերիկայի թանգարան) լեգեոնականների արխիվներում և շնորհակալ ենք թանգարանի հոգաբարձուներին, ինչպես նաև վարիչ Գարի Լինդ-Սինանյանին ու



Տիգրան Հ. Բոյաջյանի «Հայկական լեգիոն» գրքի տիտղոսաթերթը:
Տրամադրված է «Baikar Press»-ի կողմից:



Ջորջ Բոլլիգյանը (աջից չորրորդը) զինակիցների հետ:
Տրամադրված է Ամերիկայի հայկական թանգարանի կողմից:



Հայկական լեգեոն. Փոսթ դ'Էրզին (հայտնի է նաև որպես Յեշիքենտ)՝ քաղաք թուրքական ափի Հաթայ շրջանում: Մայքլ Նաջարյանի հավաքածուից:

տնօրեն Պերժ Չեքիջյանին այս կարևոր աղբյուրն օգտագործելու, այդ թվում՝ գրքի բազմաթիվ լուսանկարներն օգտագործելու թույլտվության համար: Թանգարանի արխիվների հիմքում լեգեոնականների մասին երկու ցուցահանդեսի նյութերն ու տեքստերն են, և մենք շնորհակալություն ենք հայտնում Արտեմիս Մաթևոսյանին, Առաքել Ալմասյանին ու Բարբարա Մերգերյանին մտքերով ու խորհուրդներով մեծահոգաբար կիսվելու համար:

Կիպրոսում Սյուզանին հաջողվեց ստանալ Ռուբ Քեշիշյանի խորհուրդները, տեղեկություններ ու հղումներ՝ Անաստասիա Թումազովից, և Բարեթ (Դյուք) Բեդելյանի հետ ոգեշնչող այցեր կատարել լեգեոնականների համար կարևոր վայրերը՝ Մինարկա գյուղ և Քանթարա ամրոց: Մենք երախտապարտ ենք Կիպրոսի մեր բազմաթիվ ընկերներին և բոլորին, ովքեր կիսվեցին իրենց տեղեկություններով ու լուսանկարներով:

Լուսանկարներն ու պատկերները մի շարք աղբյուրներից են, բացի

թանգարանի հավաքածուից: Մենք երախտապարտ ենք Հայկական լուսանկարչական արխիվի SAVE ծրագրին և արխիվատեր Սյուզան Ադամսին, Փարիզում ՀԲԸՄ «Նուբար գրադարանին» և գրադարանավար Բորիս Աճեմյանին, Սթենֆորդի համալսարանի Հուվեր ինստիտուտին և այն բազմաթիվ անհատներին, ովքեր տրամադրել են իրենց թանկարժեք լուսանկարները և փաստաթղթերը ինչպես մեզ, այնպես էլ նախկինում Մայքլ Նաջարյանին: Ծնորհակալ ենք Հայկական հետազոտությունների և ուսումնասիրությունների ազգային ասոցիացիայի (NAASR) Մարկ Մամիկոնյանին և Լոնդոնի Հայկական տեղեկատվական և խորհրդատվական կենտրոնի Միսակ Օհանյանին, Վահե Աբելյանին, Լին Քաղվիլադերին, Մայքլ Վարադյանին և անշուշտ՝ Լևոն Չիլինգիրյանին: